ԵԴ2/6764/02/26
(ՎԴ/8345/05/26)

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԳՈՐԾԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

29 հունիսի 2026 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի վարչական պալատի նախագահ Հովսեփ Բեդևյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին փոխարինող Արսեն Մկրտչյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին փոխարինող Հայկ Գրիգորյանս նիստում ուսումնասիրելով թիվ ԵԴ2/6764/02/26 (ՎԴ/8345/05/26) գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ՀՀ Վճռաբեկ դատարան ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 19-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Վ.Ա.-ը 2026 թվականի մայիսի 21-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին:

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 29-ի որոշմամբ գործը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2026 թվականի հունիսի 19-ի որոշմամբ գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարան:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2026 թվականի հունիսի 23-ին:

Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, մինչև 01.01.2025 թվականը գործող խմբագրությամբ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածին, 37-րդ հոդվածի 2-րդ մասին, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի մայիսի 2-ի թիվ ՀՕ-222-Ն ՀՀ օրենքի 3-րդ հոդվածին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասին՝ ՀՀ վարչական դատարանը 2026 թվականի մայիսի 29-ի որոշմամբ գործը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) մինչև 01.01.2025 թվականը հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու հետ կապված վեճերն ընդդատյա են եղել ՀՀ վարչական դատարանին, սակայն 01.01.2025 թվականից սկսած հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, իրականացնելու և դրանից ազատելու հետ կապված վեճերի քննությունը վերապահվել է ՀՀ ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

Ամբողջ վերոգրյալի հաշվառմամբ, ինչպես նաև հիմք ընդունելով սույն գործով ներկայացված հայցադիմումով ներկայացվել է հանրային ծառայության իրականացման հետ կապված վեճ Դատարանը եզրահանգում է, որ հայցվոր Վ.Ա.-ի պահանջը, այն է՝ ՀՀ պաշտպանության նախարարությանը պարտավորեցնել հաշվարկել Վ.Վ.Ա.-ի ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը և տրամադրել նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները, վարչական դատարանում քննության ենթակա չէ, ուստի այն պետք է վերահասցեագրել ըստ ընդդատության՝ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (…)»[1]:

6. Հղում կատարելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 26-րդ հոդվածի 1-ին ու 2-րդ մասերին, 202-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին, 210-րդ հոդվածին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 67-րդ հոդվածին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ 2010 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ ԵԱՔԴ/1369/02/09 քաղաքացիական գործով արտահայտած իրավական դիրքորոշմանը՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործը ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին ու այդ առնչությամբ դիմել է Վճռաբեկ դատարան՝ նշելով հետևյալը. *«(…) սույն գործով վիճելի իրավահարաբերությունն իր բնույթով հանրային է և վերաբերում է պատասխանողի՝ որպես հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություններին, հետևաբար՝ նշված հայցն ընդդատյա է ՀՀ վարչական դատարանին:*

(…):

Առանձին աշխատանքային վեճերով իրավահարաբերությունների առանձնահատկությամբ պայմանավորված՝ առավել արագ և արդյունավետ

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 40-43:

պաշտպանության նպատակով օրենսդիրը նշված վեճերը դասել է հատուկ հայցային վարույթների շարքին: Միաժամանակ, սահմանվել է հատուկ հայցային վարույթի կարգով քննվող առանձին աշխատանքային վեճերի հետ կապված վեճերի շրջանակը, այն է՝ աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի փոփոխման, լուծման, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը: Նման վեճերի համար նախատեսելով հատուկ ընթացակարգ՝ օրենսդիրը միաժամանակ նախատեսել է գործի քննության հատուկ ժամկետներ, ապացուցման բաշխման հատուկ կանոններ:

Վերը նշվածից հետևում է, որ առանձին աշխատանքային գործերով վեճ հասկացության տակ դիտարկվում են միայն վերը նշված վեճերը, իսկ դրանց շրջանակից դուրս ներկայացված պահանջները չեն կարող դիտարկվել որպես առանձին աշխատանքային գործերով վեճ և քննվել և լուծվել այն ընթացակարգով, որը նախատեսված է տվյալ հատուկ հայցային վարույթի նորմերով:

(…):

Համաձայն չլինելով ՀՀ վարչական դատարանի կողմից որոշված գործի ենթակայությանը՝ գտնում եմ, որ առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ենթակայությունը որոշելու նպատակով ՀՀ վճռաբեկ դատարանին գործն ուղարկելու հիմքը»[2]:

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

7. Սույն գործով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավոր է արդյո՞ք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/6764/02/26 (ՎԴ/8345/05/26) գործն ըստ Վ.Ա.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին*

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 50-53:

ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝*

1) վարչական դատարանը. (...)»:

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մասնակության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (...) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի համաձայն՝ *«(...) 2. Դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում վարչական դատարանից վերահասցեագրված հայցադիմումը վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը:*

(...)

6. Սույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված դեպքերում Վճռաբեկ դատարանի նախագահը և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահները գործը Վճռաբեկ դատարանում սրանալու պահից տասնօրյա ժամկետում որոշում են գործի ենթակայությունը:

7. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունելու համար Վճռաբեկ դատարանի նախագահը հրավիրում է նիստ՝ իր և Վճռաբեկ դատարանի բոլոր պալատների նախագահների մասնակցությամբ, որն իրավազոր է, եթե դրան մասնակցում են նիստին մասնակցելու իրավունք ունեցող բոլոր անձինք:

8. Սույն հոդվածի 6-րդ մասով նախատեսված որոշումն ընդունվում է նիստին ներկա անձանց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում: Որոշմանը կողմ քվեարկած դատավորների կազմից և նրանց կողմից որոշված դատավորը կազմում է որոշման նախագիծը:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

10. Սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով գործի ենթակայությունը սահմանելու մասին որոշում կայացվելու դեպքում չի կարող վերաքննիչ բողոք բերվել սույն օրենսգրքի 365-րդ հոդվածի 2-րդ մասի 11-րդ կետի հիմքով այն պատճառաբանությամբ, որ գործը ենթակա չի եղել քննության քաղաքացիական դատավարության կարգով»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի՝ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող խմբագրությամբ 1-ին կետի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, ներառյալ՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-220-Ն ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ *«2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական*

դատավարության օրենսգրքի (...) 10-րդ հոդվածում 1-ին մասի 1-ին կետն ուժը կորցրած ճանաչել»:

Նույն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «*Սույն օրենքի 1-ին և 35-րդ հոդվածներն ուժի մեջ են մտնում 2025 թվականի հունվարի 1-ից: Մինչև սույն մասով նախատեսված հոդվածներն ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից, շարունակում են քննվել վարչական դատարանում, իսկ 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները քննվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով նախատեսված կանոններով»:*

2024 թվականի մայիսի 2-ին ընդունված և 2025 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-222-Ն ՀՀ օրենքով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 24-րդ գլխի կարգավորման շրջանակը ընդլայնվել է՝ դրանում ներառելով նաև հանրային ծառայության հետ կապված վեճերը: Մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 210-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Դատարանը սույն գլխով սահմանված կարգով քննում և լուծում է աշխատանքային պայմանագրի կամ անհատական իրավական ակտի փոփոխման, լուծման, հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը և աշխատողին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետ կապված անհատական աշխատանքային վեճերը (...)»:*

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Հանրային ծառայությունը հանրային իշխանության մարմիններին Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացումն է, որն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը և հանրային պաշտոնները:*

2. Պետական ծառայությունը մասնագիտական գործունեություն է, որն ուղղված է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պետական մարմիններին վերապահված լիազորությունների իրականացմանը:

3. Պետական ծառայությունն ընդգրկում է քաղաքացիական ծառայությունը, դիվանագիտական ծառայությունը, մաքսային ծառայությունը, հարկային ծառայությունը, փրկարար ծառայությունը, զինվորական ծառայությունը (բացառությամբ օրենքով սահմանված պարտադիր զինվորական ծառայության զորակոչի միջոցով իրականացվող շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության), ազգային անվտանգության մարմիններում ծառայությունը, ոստիկանությունում ծառայությունը, հակակոռուպցիոն կոմիտեում ծառայությունը, արտաքին հետախուզության ծառայությունում ծառայությունը, քրեակատարողական ծառայությունը, պրոբացիայի ծառայությունը, հարկադիր կատարման ծառայությունը, դատական կարգադրիչների ծառայությունը, էկոպարեկային ծառայությունը, տեղեկատվական համակարգերի կարգավորման մարմնում ծառայությունը: (...)»:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Զինվորական ծառայությունը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության և պետական պահպանության մարմինների համակարգերում օրենքով սահմանված պետական ծառայության տեսակ է: Սույն օրենքով և այլ օրենքներով սահմանված կարգով զինվորական ծառայություն անցնող անձինք համարվում են զինծառայող: (...)»:*

9. Նախորդ կետում վկայակոչված իրավադրույթների վերլուծությունից հետևում է, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին է վերապահել այն բոլոր գործերը, որոնց քննությունը վերապահված չէ մասնագիտացված դատարաններին, այդ թվում՝ վարչական դատարանին: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է վարչական դատարանի ընդդատության շրջանակը, որում ներառված են հանրային իրավահարաբերություններից բխող վեճերի վերաբերյալ գործերը: Փաստորեն, որևէ դատական գործի՝ վարչական կամ առաջին ատյանի ընդհանուր

իրավասության քաղաքացիական դատարանում քննության ենթակա լինելու հարցը որոշվում է՝ հիմք ընդունելով այն իրավահարաբերության բնույթը (մասնավոր կամ հանրային), որից բխող վեճը հանձնվում է դատարանի քննությանը:

Հարկ է նշել, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը գործող իրավակարգավորումների պայմաններում, ՀՀ վարչական դատարանի ենթակայությանը վերապահված էին նաև հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը: Մինչդեռ 2025 թվականի հունվարի 1-ից օրենսդիրը նշված գործերի քննությունը վերապահել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարաններին՝ ՀՀ վարչական դատարանի քննությանը թողնելով միայն այն վեճերը, որոնց վերաբերյալ հայցադիմումները վարչական դատարանի կողմից վարույթ են ընդունվել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

10. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Վ.Ա.-ը 2026 թվականի մայիսի 21-ին հայցադիմում է ներկայացրել (վարչական դատավարության էլեկտրոնային համակարգի միջոցով) ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին[3],

- գործը ՀՀ վարչական դատարանի՝ 2026 թվականի մայիսի 29-ի որոշմամբ վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ 2025 թվականի հունվարի 1-ից հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, իրականացնելու և դրանից ազատելու հետ կապված վեճերի քննությունը վերապահվել է առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին[4],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2026 թվականի հունիսի 19-ի որոշմամբ գտել է, որ սույն գործով վիճելի իրավահարաբերությունն իր բնույթով հանրային է և վերաբերում է պատասխանողի՝ որպես հանրային իշխանական

[3] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[4] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

լիազորություններով օժտված սուբյեկտի հանրային իրավունքի բնագավառում որոշակի հարցի լուծմանն ուղղված գործողություններին[5]:

11. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-րդ և 9-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների ու արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նշել, որ սույն գործով հայցվոր Վ.Ա.-ը 1992 թվականի փետրվարի 1-ից մինչև 1992 թվականի սեպտեմբերի 1-ը և 1992 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2012 թվականի նոյեմբերի 30-ը ծառայել է զինված ուժերի շարքերում, իսկ 2012 թվականին վերջինիս նկատմամբ նշանակվել է երկարամյա ծառայության կենսաթոշակ: Վ.Ա.-ի կողմից ներկայացված հայցի առարկան ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջներն են:

Նշված իրավահարաբերությունում կողմերից մեկը թեկուզև հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը, իսկ հայցի առարկան՝ հայցվորի ձևակերպմամբ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 68-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով պատասխանողին որոշակի գործողություններ կատարելուն պարտավորեցնելու պահանջը, այդուհանդերձ, նշվածն ինքնին չի կարող պայմանավորել գործի ենթակայության հարցի լուծումը, քանի որ ենթակայության որոշման համար էական է պարզել հայցվորի պաշտպանության ենթակա իրավունքի և, համապատասխանաբար, հայցի հիմքում ընկած իրավահարաբերության բնույթը:

Տվյալ դեպքում հայցի առարկայի և հիմքի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից վերը նշված գործողությունները կատարելը մերժելու պայմաններում, Վ.Ա.-ի՝ «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի իմաստով որպես հանրային ծառայողի և պատասխանողի միջև ծավալվել է հանրային ծառայության հետ կապված նյութահրավական վեճ, մասնավորապես՝ Վ.Ա.-ի պաշտպանության ենթակա իրավունքն իր էությամբ բխում է հանրային ծառայության հետ կապված

[5] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

իրավահարաբերություններից: Ինչպես արդեն իսկ վերը նշվեց, սույն որոշման 8-րդ կետում վկայակոչված օրենսդրական փոփոխությունների արդյունքում օրենսդիրը հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը հանել է ՀՀ վարչական դատարանի ենթակայությունից և վերապահել առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների քննությանը՝ քաղաքացիական դատավարության կարգով, որպիսի կարգավորումից բացառություն է նախատեսվել միայն այն վեճերի համար, որոնց վերաբերյալ հայցադիմումները ՀՀ վարչական դատարանի կողմից վարույթ էին ընդունվել մինչև 2025 թվականի հունվարի 1-ը:

Սույն դեպքում հայցադիմումը ՀՀ վարչական դատարան է ներկայացվել 2026 թվականի մայիսի 21-ին, այսինքն՝ 2025 թվականի հունվարի 1-ից հետո:

12. Վերոգրյալից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ2/6764/02/26 (ՎԴ/8345/05/26) գործն ըստ Վ.Ա.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր չէ:

Ուստի, Վ.Ա.-ի հայցի հիման վրա հարուցված թիվ ԵԴ2/6764/02/26 (ՎԴ/8345/05/26) գործը ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

թիվ ԵԴ2/6764/02/26 (ՎԴ/8345/05/26) գործն ըստ Վ.Ա.-ի հայցի ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ ծառայության ընթացքում չօգտագործված արձակուրդի, հանգստյան և տոնական օրերի քանակը հաշվարկելուն ու նշված օրերին ծառայության մեջ գտնվելու համար տրվող գումարները տրամադրելուն

պարտավորեցնելու պահանջների մասին, ենթակա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՀՈՎՍԵՓ ԲԵԴԵՎՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ԱՐՍԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ
ՀԱՅԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ